# Մի քանի կանոն երեխայի դաստիարակության համար



Հաճախ ինքներս մեզ հարց ենք տալիս, թե ինչու՞ է մեր երեխան այսպիսի կամ այնպիսի վարք դրսևորում, երբ մենք նրան բոլորովին այլ բան ենք սովորեցնել: Երեխայի դաստիարակության գործընթացում կարևոր դեր է կատարում ընտանեկան առողջ մթնոլորտը: Կարևոր է հիշել, որ.

Երեխան ինչպես ապրում, այնպես էլ սովորում է:
Հետևաբար.

• Եթե երեխան հանդիպում է թշնամանքի, նա սովորում է կռվել,
• Եթե երեխան հանդիպում է մեղադրանքի, նա սովորում է մեղք գործել,



• Եթե երեխան հանդիպում է հանդուրժողականության, նա սովորում է բարեսրտություն,
• Եթե երեխան հանդիպում է գովասանքի, նա սովորում է գնահատել,
• Եթե երեխան հանդիպում է ազնվության, նա սովորում է արդարություն,
• Եթե երեխան հանդիպում է ապահովության, նա սովորում է ինքնավստահություն դրսևորել,
• Եթե երեխան հանդիպում է ծաղրի ու արհամարհանքի, սովորում է վախ, երկչոտություն,
• Եթե երեխան ունենում է ընկերներ, նա սովորում է, թե ինչ բան է սերն աշխարհում:

*Պատրաստեց՝ Նարին Մուրադյանը*
*(«Այբ Բեն Գիմ» զարգացման ակումբի Էրգոթերապիստ, հատուկ հոգեբան)*